Սիպիլ

Մենաստանին կույսը

Կեսգիշեր է . սենյակիս մեջ միայնակ՝
Կանթեղ չունիմ, ոչ ալ երկինքն ունի շող .
Իր լույսն հետին մարեց դարպասն ու տընակ .
Եվ մնացի իմ խոհերուս հետ մաշող:
Կթափառին շուրջս ըստվերներ թանձրահոծ,
Մերձենալով, հեռանալով համրաբար,
Եվ կլսեմ իրենց վայունն ողբակոծ,
Երբ կանգ կառնել կուգան հոգնած ու մոլար:
Տըխուր մըտքիս ուրվականներն են համակ,
Ցընորք հոգվույս հագիվ հասած արբունքի,
Եվ մինչ կանցնին օրերըս ցուրտ ու ցամաք՝
Անոնք կուտան ինձ ըսփոփանք արցունքի:
Ջի մինակ եմ հոս դեմքերու հետ տըրտում,
Կույսերու հետ, որոնք չունին իղձ ու խանդ,
Որոնց ձայնին վանկերն՝ աղոթք անպատում,
Կխորտակեն երազս ու հույսս մանավանդ:
Ապրիլ կուզեմ . անոնք երկինք ցույց կուտան:
Սիրել կըղձամ . կգոչեն . «Մեր է Աստված»:
Եվ կպատմեն Դավիթը, Հոբն ու Հուդան .
Կըսեն . «Միայն մահվան համար ենք հաստատված»:
Զո՛ւր կվառե երկինք արևն ու լուսին,
Ձոնելով կյանք ծաղկին, դաշտին ու մարդուն,
Ես կդառնամ նորեն համեստ այն լույսին,

Որուն ներքև լուռ կիրսկե աչք մ'արթուն:
Բոցեղ շունչ մը կխընդրեմ ես, սիրտ մը տաք,
Որ խառնըվի տենդոտ հոգվույս հորձանքին,
Եվ Սաղմոս մը կդընեն, ա՛հ, բարձիս տակ,
Խաչ մ'ալ փայտե ընդդեմ սըրտիս փորձանքին:
Այդ փորձանքներն ես կերազեմ անդադար,
Կյանքի բոլոր մեծ պայքարներն, հուրն անհուն,
Աշխարհի մեջ չընչին բաժինս իմ արդար,
Եվ կթողում երկինքն՝ իրեն սուրբերուն:

1892